

ԿԱՐՈՒՔ

Մերի Հրաչյանի Շաբոյանի <<Լոգոպետական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո>> թեմայով ատենախոսության վերաբերյալ կարծիք, որը ներկայացվում է ԺԳ.00.03 - <<Հատուկ մանկավարժություն>> (Լոգոպետիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համաձայն:

Մ.Հ. Շաբոյանի գրախոսվող գիտական աշխատանքը նվիրված է լոգոպետիայի տեսության և փորձի կարևոր և արդիական խնդիրներից մեկին՝ կոկորդի հեռացման օպտիմալացման ուղիների աշխատանքին: Հեղինակը ընտրել է այդ խնդրի լուծման համարյա չուսումնասիրված ուղղություն՝ կոկորդի հեռացումից հետո ձայնի ձևավորման համար տարվող լոգոպետական աշխատանքի օպտիմալ ուղիների և մոտեցումների մշակումը՝ հաշվի առնելով հայոց լեզվի հնչյունաբանական և ազգային, սոցիալ-մշակութային առանձնահատկությունները:

Հետազոտվող հիմնախնդրի արդիականությունը սահմանվում է ամենից առաջ նրանով, որ այդ խնդրի ոչ բավարար տեսական և գործնական մշակվածությունը, դժվարացնում է լոգոպետական աշխատանքի իրականացումը հեռացված կոկորդով անձանց հետ: Այդ պատճառով այդ խնդրի դրվածքի հետազոտությունն ու գիտական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում հնարավորություն է տալիս ի հայտ բերել առկա խնդիրներն ու մշակել այդ աշխատանքի օպտիմալացման ուղիները:

Վերոգրյալը սահմանում է այս հետազոտության արդիականությունը, դրա տեսական և գործնական նշանակությունը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքը շարադրված է համակարգչային տեքստի 150 էջերի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հետազոտության գիտական նորույթը սահմանվում է՝

- Հայաստանի Հանրապետությունում կոկորդի հեռացմամբ անձանց հետ լոգոպետիական աշխատանքի հետազոտությամբ և վերլուծությամբ,

- Կոկորդի հեռացումից հետո այդ անձանց հետ լոգոպեդիական աշխատանքի օպտիմալ մոդելների, հատուկ առաջադրանքների և մոտեցումների մշակմամբ,
- Կոկորդը հեռացրած անձանց ընտանիքների մեթոդական ուղեկցման մոտեցումների մշակմամբ:

Կարելի է պնդել, որ կոկորդը հեռացված անձանց հետ լոգոպեդական աշխատանքի մասին տեսական գիտելիքների և պատկերացումների ընդլայնումն ու խորացումը, տվյալ անձանց հետ լոգոպեդական աշխատանքի մշակված մոտեցումների արդյունավետության տեսական հիմնավորվածությունը, ինչպես նաև ստացված արդյունքների տեսական հիմնավորվածությունը ընդհանուր առմամբ սահմանում են Ա.Հ. Շաբոյանի կողմից անցկացված ատենախոսական հետազոտության տեսական նշանակությունը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է՝

- Կոկորդը հեռացված անձանց հետ անցկացվող լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոդելի մշակման և ներմուծման մեջ,
- Մայրենի լեզվով նյութի, մեթոդական մոտեցումների մշակման մեջ, կոկորդը հեռացված անձանց հետ գործնական լոգոպեդական աշխատանքի բովանդակության մեջ,
- Կոկորդը հեռացված անձանց հետ լոգոպեդական աշխատանքի անցկացման և կազմակերպման մշակված մոտեցումների, միջոցների և ուղիների կիրառման արդյունավետության փորձառական արդյունավետության մեջ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովում է ինչպես անցկացված աշխատանքի ծավալով, հարցվողների քավարար կոնտինգենտի ներառմամբ, այնպես էլ հետազոտության խնդիրների և մեթոդների ժամանակակից և աղեկվատ դրվագքի կիրառմամբ:

Տեսական և գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովում է նաև հետազոտության արդյունքների քննարկումներով և հեղինակի հրապարակումներով:

Գրախոսվող աշխատանքի վերլուծությունը վկայում է այն մասին, որ հայտատուն հստակ և անհրաժեշտ մակարդակով կարողացել է ձևակերպել հետազոտության

նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան և վարկածը, սահմանել և լուծել արդիական և կարևոր գիտական խնդիրները, խորը և բազմակողմանի վերլուծել և անհրաժեշտ գիտական մակարդակի վրա մեկնաբանել հետազոտության ստացված արդյունքները:

Ս.Հ. Շարոյանի կողմից անցկացված հետազոտությունների ստացված էական արդյունքներին են վերաբերում՝

1. Հետազոտվող խնդրի տեսական ոլորտների բազմակողմանի և խորը վերլուծությունը և կոկորդի հեռացումից հետո անձանց հետ լոգոպեդական աշխատանքի կազմակերպման և անցկացման համար ժամանակակից մոտեցումների ընդհանրացումը:

2. Օպտիմալ մոդելի, հատուկ առաջադրանքների, կոկորդի հեռացումից հետո անձանց հետ լոգոպեդական աշխատանքի միջոցների և մոտեցումների մշակումը, ինչպես նաև հաշվի առնելով հայց լեզվի առանձնահատկությունները, դրանց արդյունավետության գիտափորձի հիմնավորվածությունը:

3. Կոկորդի հեռացմամբ անձանց ընտանիքներին մեթոդական օգնություն ցուցաբերելու համար մոտեցումների մշակումը:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող ատենախոսական աշխատանքը, մենք կցանկանանք նշել նաև այս աշխատանքի առանձին բաղթողումները:

Ցանկալի կլիներ, որ

1. ատենախոսի կողմից իրականացված սոցիարցման շրջանակներում ընդգրկվեին նաև հոգեբաններ:
2. Ատենախոսական աշխատանքի առաջին գլխում հիմնահարցի տեսական վերլուծության համատեքստում առավել հանգամանալից անդրադարձ կատարվեր հաղորդակցման գործընթացի տեսական վերլուծությունը:
3. Հեղինակի կողմից առաջարկված արժեքավոր և հարուստ հավելվածը ներառեր նաև այնպիսի առաջադրանքներ, վարժություններ, խոսքային նյութ, որը կիրառելի կլիներ ոչ միայն մեծահասակների, այլ նաև խնդրի առկայության պարագայում՝ երեխաների համար:

4. Ներկայացված օգտագործված գրականության ցանկում կան հետևյալ բացթողումները.

- Ցանկում ներկայացված է 157 աղբյուր, բայց պետք է լինի 163, որովհետև 6 աշխատանք առանձին չեն համարակալված, այլ ներկայացված են N 3 (էջ 115), N 10 (էջ 118), N 90 և 100 (էջ 123), N 155 (էջ 127):
- Տերսում ներկայացված են հեղինակներ, իսկ գրականության ցանկում դրանք չկան՝ էջ 4 - Վ. Ն. Գերասիմենկո և ուրիշներ (1981), էջ 12 - Ս. Լ. Տապտապովա, (2000), Ա. Դ. Կապրին և ուրիշներ (2016), էջ 17 - Ժ. Աբիտով (2017), էջ 25 - Վ. Ն. Գերասիմենկո և ուրիշներ (1981), էջ 63 - Օ. Ս. Օրլովա (2008) և ուրիշներ:
- Օգտագործված գրականության մեջ ներկայացված են հեղինակներ (N 18, 30, 31, 39, 51, 63, 73 և այլն), որոնք ատենախոսության մեջ չկան:

5. Ատենախոսական աշխատանքում առկա են առանձին մտքերի կրկնություններ, տեխնիկական անձշտություններ, վրիպակներ (ներածությունում, առաջին զիյում և այլն):

Մեր կողմից արված նկատառումները չեն նվազեցնում Մ. Հ. Շարոյանի կողմից կատարված ատենախոսական աշխատանքի արժեքը, որը հանդիսանում է ինքնուրույն կատարված հետազոտություն, որում իրականացվել է տեսական ընդհանրացում և կարևոր գիտական խնդրի լուծումը՝ կոկորդի հեռացումից հետո լոգոպեդական աշխատանքի բարելավման ուղիների մշակումը, որն ունի կարևոր նշանակություն լոգոպեդիայի տեսության և փորձի համար:

Ատենախոսության սեղմագիրը և զիտական հրապարակումները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերոգրյալը թույլ է տալիս անել հետևյալ ընդհանուր

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների և եզրակացությունների ճշտությունն ու հիմնավորվածությունը հիմք են տալիս

համարելու, որ Մերի Հրաչյանի ատենախոսությունը՝ <<Լոգոպեդիական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո>> հանդիսանում է ինքնուրույն կատարված աշխատանք, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ պահանջներին, ԺԳ.00.03- <<Հատուկ մանկավարժություն>> (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման համաձայն, իսկ հեղինակը արժանի է զիտական աստիճանի շնորհմանը:

ԴԱՇՏՈՒՍԱԿԱՆ ԸՆԴԻՒՄԱԽՈՎՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի, մանկավարժական զիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

 /Ռ.Ն. Ազարյան/

պրոֆեսոր ՀՀ Կոմիտասի ստորագրությունը,
հաստատման թվականը՝ 2007 գումարտուղար

 / Ա.Ա. Բապիրյան/



09.06.2022թ.